ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4513-Ա « 20 » նոյեմբերի 2024 թ.

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերությունը.

1. Համաձայնություն տալ՝

1) Երևանի քաղաքապետարանի 2024 թվականի կարիքների համար տեսանկարահանող և լուսանկարահանող տեխնիկայի ձեռքբերման ընթացակարգը «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ մեկ անձից գնում կատարելու ձևով իրականացնելուն՝ համաձայն սույն որոշման հավելվածում ընդգրկված ապրանքների.

2) հրավերը տրամադրել միայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտում նշված անձին:

2.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի լրատվության վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
20.11. 2024 թ.
N 4513-Ա որոշման

ՑԱՆԿ
ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ

N	ԱՆՎԱՆՈՒՄ	ՀԱՏ	ԸՆԴԱՄԵՆԸ (ՀՀ դրամ)
1	Լուսատեսանկարչական տեսախցիկի լրակազմ 1	1	4114400
2	Տեսախցիկի օբեկտիվ FE 16-35mm	1	984000
3	Տեսախցիկի օբեկտիվ FE 70-200mm	1	1422000
4	Տեսախցիկի օբեկտիվ FE 24-105mm	1	498000
5	Տեսախցիկի հանդարտիչ լրակազմ	1	1554600
6	Համակարգչի պարագաներ Մոնիտոր և հիշողության կրիչ	1	705000
7	Լուսատեսանկարչական տեսախցիկի լրակազմ 2	1	4010000
8	Լուսատեսանկարչական տեսախցիկի լրակազմ 3	1	3251000
9	Տեսախցիկի օբեկտիվ **R**F 15-35mm	1	959000
10	Տեսախցիկի օբեկտիվ **R**F 24-105mm	1	1812000
11	Լուսանկարչական տեսախցիկի ֆլեշ հավաքածու	1	216000
12	Լուսատեսանկարչական տեսախցիկի եռոտանի	1	2097000
	ԸՆԴԱՄԵՆԸ		**21623000**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**